ԳԼՈՒԽ ՃԿԴ.

'Ի յերեսս երկրին և 'ի տանն ամենայն իշխանութեան հայոց զօրութիւն զինուորաց մնասցէ 'ի ձեռին զօրագլխոյն աշխարհին յայնմիկ հնազանդ հրամանի իշխանին աշխարհին յայնմիկ ըստ Օրինաց։

ԳԼՈՒԽ ՃԿԵ.

Ամենայն պարտապան որ 'ի պարտոյ ոսկոյ և երծաթոյ, կամ զինոյ, ցորենոյ որ ոչ իցէ, պարտ քրէական զի մտեալ լինիցի 'ի բանտ, եթէ գուցէ գտանիցէ երաշխաւոր ժամանակաւոր վասն անձին իւրոյ և թղթաւ ձեռնադրեցեալ երաշխաւորին տացէ բանտապանին իւրոյ՝ կարող է ելանել 'ի բանտէն ամենայն երեկոյեան շաբաթու որում լուսանայ միաշաբաթն ազատապէս մտանել տուն և բնակութիւնս իւր և բոլոր Օրն կիրակէի մտանել տուն Տեառն Աստուծոյ և շրջել 'ի քաղաքի և նոյն Օրն ժամ երեկոյեան դառնալ անդրէն 'ի բանտ։

ԳԼՈՒԽ ՃԿԶ.

Ամենայն բանտ արկեալ պարտու ոսկոյ և արծաթոյ բայց 'ի քրէական մեղաց եթէ գուցէ զի փախիցէ 'ի բանտէ, իշխան աշխարհին յայն-